



ԱՐԵՎՄԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՏԱՐԱՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
GOVERNMENT OF WESTERN ARMENIA

Հայաստանյան քաղաքական դաշտի վերջին զարգացումները իրոք ցույց են տալիս, որ հայ հանրությունը հասել է մի այնպիսի եզրագծի, որից այն կողմ քառն է և ողբերգությունը: Ինչ խոսք հասկանալի է, հասարակության և պետության ճիշտ հարաբերությունների արտահայտիչը քաղաքացիների բարեկեցության աստիճանն է, քաղաքացու իրավահավասարությունը և սոցիալական ապահովվածությունը: Եվ հանուն քաղաքացու բարեկեցության ազատության և իրավահավասարության իրոք կարելի է փնտրել հինգերորդ անկյունը բայց ոչ հակամարտության միջոցով:

Հայտնի է, բոլոր ժամանակներում, լավ իշխանությունը իր պետության տարածքում լուծում է երկու խնդիր՝ բարեկեցություն և բնակչության աճ: Մնացած խնդիրները բխում են այս երկու արմատական երևույթների ճիշտ կամ սխալ լուծումներից: Ակնհայտ է, որ քսանհինգ տարիների ընթացքում այս երկու խնդիրները չստացան իրենց լուծումները, ակնհայտ է նաև, որ բարեկեցության հարցը դարձավ անձի խնդիր, իսկ բնակչության աճի բացակայության խնդիրը իշխանությունների կողմից ներկայացվեցին իբրև թե հասկանալիորեն պատճառաբանված:

Քաղաքական և սոցիալական ոչ իրավահավասար զարգացումների, արդարադատության իսպառ բացակայության, «ընտրովի արդարադատության» արդյունքում Հայաստանի Հանրապետությունում հասարակության բնեռացումը դարձավ փաստ, որն էլ իր հերթին ծնեց այս ճգնաժամը: Այն, ինչ այսօր կատարվում է Հայաստանում, դա հասարակական, քաղաքական իրավական փոխհարաբերությունների ճգնաժամ է և այս ճգնաժամի մեջ գտնվում ենք բոլորս, անկախ բնակչության վայից, սոցիալական վիճակից և հասարակության մեջ զբաղեցրած դիրքից, հուսով ենք, որ ճգնաժամի ակունքներին կանգնած կողմերը խորապես գիտակցում են, որ յուրաքանչյուր հակամարտություն ավարտվում է ոչ թե կողմերից մեկի հաղթանակով այլ հաշտությամբ:

Մենք վստահ ենք, Հայաստանի Հանրապետության հայոց այրերը ցեղասպանության 100 տարվա շեմին և Գալիպոլի ճակատամարտի 100 ամյակի տոնակատարության կազմակերպիչներին ներհայկական հաշտությամբ իրոք ճիշտ անակնկալ կմատուցեն, եւ հայ հասարակությանը դուրս կբերեն ճգնաժամից անվնաս, որը մեզ բոլորիս հնարավորություն կտա խոսելու ապագա չորրորդ հանրապետության լույս աշխարհ գալու մասին: Արևմտյան Հայաստան Պետության Վտարանդի Կառավարությունը այդ ակնկալիքները ունի և այսպես է տեսնում ճգնաժամի հանգուցալուծումը:

Դիմում ենք բոլոր ուժերին՝ հոգևոր հայրերին, նրաց ովքեր կիզակետում են, նրանց ովքեր մասնակից են, նրանց ովքեր լիազորված են օրենքի ուժով, նրանց ովքեր տանում են Հայաստանի Հանրապետության և հայոց ազգի պատասխանատվությունը՝ արտերկրում ապրող ողջ հայությունը և Արևմտյան Հայաստանի հայր Զեզանից ակնկալում է, կարճ ժամանակամիջոցում, առաջացած ճգնաժամի արդարացի եւ խաղաղ հանգուցալուծում: ՀՀ պետության տարածքում լուծել ՀՀ քաղաքացու բարեկեցության և հայ ազգաբնակչության աճի խնդիրները:

Վարչապետ  
Ա.Մկրտչյան

17.02.2015թ. Germany, Mainz

